



ԿԻՉՈՂՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային «Կուսարի» թերթի հավելված

1991 թ. Մայիս, № 27: Գինը՝ 50 կոպ.

Հ Ի Շ Ո Ղ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը Տ Ե Ս Ո Ղ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Է

Հիշողությունը տեսողություն է, մի յուրահատուկ հոգևոր տեսողություն, հոգու աշխարհ... Հիշողություն չունեցար, հոգու աշխարհ չունեցար, կույր ես ու կույր: Եվ դա ավելի վատթար կուրություն է, քան աշխարհի կուրությունը: Ավելի վատթար կուրություն:

Առավել վատթար կուրություն:

Պահում ենք, պահելու ենք մեր հիշողությունը... Կյանքի պես թանկ, կյանքից առավել թանկ այդ հիշողությունը, մեր պապեր, մեր հայրեր, երեխաներ մեր էր, մեր հոգու, մեր սրտի, մեր արյան մեջ, այսօր թող գա իջնի մեր հոգուն, մեր սր-

տին, մեր արյանը... Քանի մենք կանք ու ապրում ենք՝ մեր մեջ մնա, մեր կյանքի ժամանակի մեջ, — մեր մահից հետո, մեզանից հետո, թող անցնի մեր որդիներին, որդիների հոգուն, սրտին, արյանը... Նրանց կյանքի, ժամանակի մեջ ապրի: Եվ այսպես լինի:

Թող ապրի հիշողությունը՝ մարդկային հոգու, ժողովրդի հոգու ոսկեփետուր թռչունը: Թող մեռնողների պաղ ու զուրա մահերից շվի ու բնա վուրվի ծնվող, աշխարհ եկող ներքի տալ ու արևոտ ծնունդ ներքի մեջ...

Մենք մեռնենք, մեր հիշողությունը ապրի:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԼՔՈՆՅԱՆ



Այստեղ է եղել իմ տունը:

Լուսանկարը՝ Ս. ԳՈՒՎՅԱՆԻ



Քաղաքային շտաբի պատուհանից այն կողմ:

Լուսանկարը՝ Վ. ԿՈՏՈՎԻ

ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՕՐԵՐԻ ԽՐՈՆԻԿԱՆ ԳՐՎԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՆՈՒԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՐԿՐԱՁԱՐԺ, ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐՋՆԵՐ, ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Երկրաշարժից հետո գորշ փոշին նստեց ավերված քաղաքների ու գյուղերի վրա: Ծերտ-շերտ կիտված ավերակույտերից լսվում էին աղերսող ձայներ՝ «Մեռնում եմ, օգնեցե՛ք»: «Վայ, էս ինչ գուլում էր, «Մաաա», «Վայ մն...»: «Կրծքի երեխան հետս է, արյունաքամ է լինում»:


Առաջին րոպեներին յուրաքանչյուր ողջ մնացածը շտապում էր հարազատի հետևից՝ դարոց, մանկապարտեզ, ինստիտուտ, տեխնիկում, գործարան, ֆաբրիկա: Ոմանք շփոթվել էին, այս ու այն կողմ էին վազում, մյուսները հասել էին փուլ եկած շենքերի մոտ, ուզում էին փրկել որդուն ու հորը, դստերն ու մորը, բայց չգիտեին ինչ անել, պտտվում էին ավերակույտերի շուրջն ու ձայն տալիս՝ Օճիկ, Քնարիկ, Սահակ... Որոշ կանայք, տեսնելով քանդված տունը ծնկի էին գալիս ու ձեռքերով հարվածում գորշացած հողին՝ «Տունդ քանդվի երկիր, էս ինչ օյն բերիր մեր գլխին»: Ծատերն էլ լսելով հարազատների ձայները, անգորու- թյունից նայում էին իրենց շուրջն ու ճշում: Քանի մարդ էր նետվել աղերսող ձայների կողմն ու փորձում էր օգնել: Բայց միայնակ, առանց տեխնիկայի, ինչ պիտի անեին, երբ բազմահարկ շենքերի փոխարին սալակույտերը ծածկել էին հազարավոր մարդկանց:

Համազգային ողբերգությունը միայն զինձատարողների ջանքերով հնարավոր չէր հաղթահարել: Երևանից և հանրապետության տարբեր շրջաններից հազարավոր աշխատավորներ շտապեցին Լեհիսկան, Սպիտակ, Կիրովական, աղետի մյուս վայրեր: Առաջին ժամերի տարերային այցելությունները օրվա վերջին փոխարինեցին կոլեկտիվների կազմակերպված ուղերթերի: Փրկարարական աշխատանքները բոլորից շուտ սկսեցին Արագածի, Թումանյանի, Իջևանի, մյուս մերձակա շրջանների աշխատավորները: Երևանի Լեհիսկան շրջանի փրկարարների առաջին շարապունն անցնում էր երկու հազար մարդուց: Առա-

(Ծարունակությունը՝ Ե-րդ էջում)




Լուսանկարը Ա. ԳՈՒՅԱՆԻ



Երկրափոխկայի և ինժեներային սեյսմոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի շենքը: Լուսանկարը՝ Ա. ՄԱԿԱՐՅԱՆԻ

ՄԵՐ ԴԱՍԱԽՈՍ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



ՀԱՄԼԵՏ ՍԵՐՅՈՎԱՅԻ ԱՄԻՐԲԵԿՅԱՆ

Ծնվել է 1947 թ. օգոստոսի 28-ին Սպիտակի շրջանի Կաթնաշոր գյուղում, ծառայողի ընտանիքում: 1953-54 թ. ընդունվել է տեղի յոթնամյա դպրոցը, որից հետո ուսումը շարունակում է Լենինականի № 5 գիշերօթիկ միջնակարգ դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո նա ընդունվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և այն ավարտում 1968 թ.: Համալսարանում Համլետին աչքի էր ընկնում իր աշխատանքային և գերազանց առաջադիմությամբ: Միաժամանակ ակտիվ հասարակական աշխատող էր, պատասխան չէ, որ նրան են վստահում գլխավորելու համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության աշխատանքները:


Համալսարանն ավարտելուց հետո 1969-70 թ. թ. նա աշխատել է Սպիտակի և նրա շրջանի գյուղական դպրոցներում, իսկ 1975 թ. Լենինականի Պուշկինի անվան № 6 դպրոցում: Այստեղ Համլետը գլխավորում է պատմության առարկայական հանձնաժողովը: Համլետը մեծ հարգանք ու հեղինակություն է ձեռք բերում թե դպրոցի մանկավարժական ողջ կոլեկտիվի, և թե աշակերտության շրջանում: Հաշվի առնելով նրա այս բոլոր բարենամությունները, հատկապես նրա խոր գիտելիքները, մանկավարժական վարպետությունը՝ 1980 թ. Համլետին առաջարկում են աշխատելու ԵրՊԻ-ի Լենինականի մասնաճյուղի պատմության ամբիոնում՝ սկզբում որպես ասիստենտ, իսկ հետո՝ ավագ դասախոս:

Համլետն այդ տարիներին աշխատում էր ամենայն ջանասիրությամբ, կարճ ժամանակամիջոցում ճանաչվում և հարգվում է մասնագետի որչափ պրոֆեսորա - դասախոսական կազմի և ուսանողների շրջանում: Համլետը շուտով հինգ ամսով մեկնում է Կին մասնագիտության կատարելագործման նպատակով, այդ ժամանակամիջոցում նա հանձնում է իր ասպիրանտական միջնորդները և ընտրում դիսերտացիոն թեման: Գիտական հոդվածներ է հրատարակում Կին պետական համալսարանում:

րակում Կին պետական համալսարանում:

Համլետը մեծ քննադատություն ուներ և շատ մարդկային էր, լավ քարեկամ, անզուգական անույն, ընտանիքի լավ հայր, նա հաճախ էր օգնության հասնում իր հարազատներին, բարեկամներին և ընկերներին, որոնք դրա կարիքն ունեին:

Երկրաշարժի հենց առաջին պահին նրա հետ գտնվող և հրաշքով փրկված ընկերներից ատում են, թե զգալով ահեղ երկրաշարժի վտանգը մենք Համլետի հետ միասին կանգնած էինք լսարաններից մեկի դռան շեմին, այդ պահին մենք զգացինք, թե ինչպես քնտոնե մի մեծ շարքաբառային կտոր ընկավ նրա գլխին և Համլետն անմիջապես մահացավ, ինչքան դաժան ու անհասկանալի է մարդու ճակատագիրը, հենց նույն տեղում կանգնած նրա ընկերները 4-րդ հարկից փչվածքի հետ իջան ցած, բարեխառնարար հրաշքով կենդանի մնացին և շարունակում են աշխատել նույն մասնաճյուղում, իսկ մեր սիրելի Համլետի ճակատագիրն էլ այդպես անխառնակ եղավ: Մենք՝ նրա աշխատանքային ընկերները, երբեք չենք մոռանում մեր սիրելի, շատ բարի, միշտ մեղմ ժպիտով, ազնիվ, հավատարիմ և խաթրաշահ մեր ընկերոջը:



ՎԱՐԳԵՆ ՎԱՆԻՍԻԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ծնվել է 1925 թ. հունիսի 15-ին, Ախուրյանի շրջանի Ջրառու գյուղում: Մանր են եղել կյանքի պայմանները բազմանդամ Գանիելի հարկի տակ: Կարողանալով սկզբնական կրթությունը ստացել է իր ծննդավայրի 7-ամյա դպրոցում, այնուհետև 1939-42 թ.թ. սովորել և ավարտել է Լենինականի մանկավարժական ուսումնարանը: Ուսումնառության տարիներին նա հաճախ ցրտի, անձրևի, ձյան պայմաններում կիսաբազուկ, վատ հագնված, ոտքով գալիս էր քաղաք, որ հասնելի դասերին: Ուսումնարանը ավարտելուց հետո աշխատում է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում որպես ուսուցիչ, 1943-45 թ.թ. Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո Կարգենը զորացրվում է խորհրդային բանակից և ընդունվում Լենինականի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը:


և փայլուն գիտելիքներով, գերազանցելի դիպլոմով ավարտում այն:

1949 թ. ինստիտուտն ավարտելուց հետո Կարգենը գործուղվում է աշխատելու Դուրախյանի և Ախուրյանի շրջանների գյուղական դպրոցներում:

Որոշ ժամանակ անց, Կարգենը գալիս է Լենինական, դասավանդում բժշկական ուսումնարանում, այնուհետև տնօրինում է Լենինականի № 4 և 28 դպրոցների աշխատանքները: 1962 թ. վաղ կանից մինչև երկրաշարժի նա աշխատում էր ԵրՊԻ-ի Լենինականի մասնաճյուղի պատմության ամբիոնում որպես ավագ դասախոս, այդ տարիներին նա քրտնաջան աշխատում է իր թեկնածուական թեմայի վրա և այն հասցնում համարյա ավարտին, բայց «բարի» մարդկանց շնորհիվ, այն մնաց այդպես էլ անավարտ:

Մեր ընկերը՝ Կարգենը, օժտված էր նաև մարդկային ամենազեղչելի հատկություններով, նա ազնիվ բնավորություն ուներ, միշտ մաքուր ու կոկիկ, համեստ շարժումով ու կեցվածքով մանկավարժ էր, լավ ամուսին, անզուգական հայր ու պապիկ: Կարգենն ամեն ինչում շարժվում էր, կիրթ, զուսպ ու մեղմ բնավորությամբ, ամեն հարցում զգույշ, հավատարիմ ընկեր: Այն պահին, երբ սկսվում է շարաքաստիկ երկրաշարժը, Կարգենը դասախոսում էր ԵրՊԻ-ի մասնաճյուղի նորակառույց շենքում, շենքը փլվելուց անմիջապես հետո նա մի շարք ուսանողուհիների հետ հայտնվում է նրա գերզված բնույթով: Ահա այդ ժանր պահին անհրաժեշտ էր ազդեցությունը, որ այդ աղջիկները մի կերպ դիմանան, թիչ էլ համբերեն, որ իր երկու տղաները ուր որ է կգան և իրենց բուրբին կազատեն դժոխքից: Այդ սին պատմեց փրկված աղջիկներից մեկը: Եվ իրոք, երեկոյան կողմ այդ քաղաքները իրենց ընկերների հետ միասին փրատակների տակից կենդանի դուրս հանեցին թե Կարգենին, և թե նրա մոտ գտնվող ուսանողուհիներին, իհարկե այդ կենդանի մնացած ուսանողների հետ միասին նրանք փրատակների տակից հանում էին նաև մասնաճյուղի մի շարք երիտասարդ ուսանողուհիներին, դասախոսների զիպիները: Կարգենին դուրս հանելուց հետո բժիշկները գտան, որ նրան անհրաժեշտ է շտապ տեղափոխել Մոսկվա, անբավարար էին գործում նրա երիկամները: այստեղ մեկ ամիս, կենաց ու մահու պայքարից հետո, նա 1989 թ. հունվարի 22-ին իր մահականացուն է կնքում: Նրա աճյունը տեղափոխում են և հանձնում հայրենի հողին: Շատ ծանր է հաշտվել այն մտքի հետ, որ մեզ հետ չէ մեր լավ, ազնիվ, շիտակ, հավատարիմ ընկերն ու բարեկամը:

Վ. ԾԱՀՆԱԶԱՐՅԱՆ
ԵրՊԻ-ի Լենինականի մասնաճյուղի դոցենտ



ՄԱՄԿԵԼ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ծնվել է 1960 թ., քանվորի

ընտանիքում: Դպրոցն ավարտելուց հետո սովորել է կապի տեխնիկումում, ապա աշխատանքի անցել Լենինականի կենտրոնական փոստում, որպես տեխնիկ: Աշխատակարարում նա վաղուց էլ կոլեկտիվի հարգանքը:

Նա ամուսնացավ 1988 թ. Վին և դաժան արհավիրքը թերի թողեց նրա բոլոր երազանքները: Դեկտեմբերի 7-ին սովորականի պես կնոջ հետ գնացին աշխատանքի, որտեղից Մամկելն այլևս չվերադարձավ տուն, շատերի նման դառնալով անմեղ զոհ:




ԼՈՒՍՅԱ ՀԱՎՈՐԻ ՊԱՊՈՅԱՆ

Ծնվել է 1964 թ.վականին, աշխատել է № 43 պրոֆտեխնումում և ավագ հաշվապահ: 1986-ին ծնվեց նրանց առաջնեկը, երկրորդը՝ 1988-ի դեկտեմբերի 6-ին: Տղայի ծնունդը ընտանիքում կենցաղ մեծ շուքով: Մակայն դեկտեմբերի 7-ի սև աղետը գետին հավասարեցրեց ծնունդատուներ: Ծառերի անհնկուսանումը իր մահվան իր մահվանացուն կնքեց ծննդատուները, որը թողնելով աղջկան ու փրատակներից մի կերպ փրկված նորածին տղային:



ԼՄՄԱ ԳՈՒՐԳԵՆԻ ՆԱԼԲԱՆԻՅԱՆ

Ծնվել է 1977 թ. փետրվարի 12-ին: 1985 թ. ընդունվեց Դարիքանյանի անվան № 9 դպրոցը, որ ցուցաբերեց լավ գիտելիքներ, գերազանց առաջադիմություն: Սովորում էր նաև № 1 երաժշտական դպրոցի դաշնամուրային բաժնում: 88-ին սովորում էր 5-րդ դասարանում, առաջին բառերը փակեց գերազանց գնահատականներով: Դպրոցում նրան սիրում էին, որպես պարտաճանաչ ու լավ սովորող աշակերտի: Դեկտեմբերի 7-ի ահավոր երկրաշարժը իր սև վերջակետը դրեց ինչպես շատ-շատերի, այնպես էլ նրա կյանքին:



ԳՍՅԱՆՆ ՎՈՒՈՐՅԱՅԻ ՄԵԼԿՈՆՅԱՆ

տեսնել միայն 16 գարուն: Հատուկ ոգևորությամբ էր սպասում իր ավարտական վերջին զանգին և կարծես նրա սուրբ հոգին վկայում էր, որ իր համար չի հնչելու այն և հավերժ մնալու է 10-րդ դասարանցի: Գայանեն սիրում էր իր դեպրոցը, իր ուսուցիչներին, սիրով 10 տարի սովորեց Դուկայանի անվան № 16 դըպրոցում, իր ամենը հոգում փայփայելով հազար ու մի իր ծննդավայրի մի քանի տղաների և աղջիկների համար: Նա մի հմայիչ էակ էր, լույսի մի շող, մի եղևիկ աղջիկ և այդ պայծառ լույսը խամրեց դպրոցի փրատակների տակ: Թողնելով ծնողների սրտերում մի անախճաճ միջուկ, մի անքուճակ ցավ ու կակիծ:

Ծնվել է 1972 թ. ապրիլի 13-ին: Համեստ, խոհմ, ծանրաշիտ մի աղջիկ, որը հասցրեց

ՍՈՒՍԱՆՆԱ ԿՍՏՅԱՆ

Որտե՞ղ էիր, Վահագն վիշապաճաղ, երբ արունակալ վիշապ-հրեշի Չոր կեղևներեց հողը լուս խրտեց, Երեւոց, եկվեց ու ավերակվեց: Հուպիտ հրեշի երախն արյունոտ, մուր, Կարդաց մահվան ու տառապանքի բոք, ...եվ տպագրվեց խոլ կրովառակ, Որ որոյրյունը դառնա սև պիտակ, Արիութունը՝ սեպագիր-վզեց, Հիշողութունը՝ խորագրված խոց, Որտե՞ղ էիր, Վահագն վիշապաճաղ, երբ արյունակալ վիշապ-հրեշի Համբույրե ահռոտ, մուր Կարդաց մահվան ու տառապանքի բոք:

ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՕՐԵՐԻ ԽՐՈՆԻԿՍ




Գուլպեղենի ա/մ տարածքում փրկարարական աշխատանքներ կատարող վարպետներն ու ենթալարպեղենները: Խառանկառները Հ.ՎԱՐՊԵՏՅԱՆԻ

ԱՐՄԵՆ ԱՇՈՏԻ ՈՒՆՁՅԱՆ

Ծնվել է 1965 թ. Լեւոնակա-կանում: Ավարտել է ֆիզիկա-մաթեմատիկական թե-քումով դպրոցը և նույն տա-րում ստանալով երկու հինգ զեմախտականներ, ընդուն-վել Երևանի պետական հա-մալսարանի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ֆակուլտե-տը: 1986 թ. ստանալով ռա-դիոֆիզիկոսի մասնագիտու-թյուն, Արմենը վերադառնում է հայրենի քաղաք և աշխա-

տանքի անցնում «Մագնոն» ՀԿՏԲ-ում: Մտադրվել էր ու-տունը շարունակել ասպիրան-տուրայում: Ծառ կարճ եղավ նրա կեն-սագրությունը, կյանքի սպի-տակ էջերը չգրված մնացին, բայց այդ կարճ կյանքում էլ հասցրեց լինել լավ, ազնիվ ու բարի մարդ, հարգված ըն-կեր, բարեխիղճ ու խելացի աշխատակից: Նա, որ բոլորին հասնում ու օգնում էր, իրեն չկարողացան օգնել, փրկել:



ՎԱՐՊԱՆ ԱՇՈՏԻ ԴԻՆԱՆՅԱՆ

Ծնվել է 1959 թ. մարտի 13-ին, Լեւոնականում: Ունե-ցել է ոչ այնքան ուրախ ման-կություն, փոքրոց ճաշակել է անհայտության դառնություն-ը, ինքնուրույն հարթել իր հետագա կյանքի ճանապար-հը: Վարդանը չափից ավելի ուղղամիտ էր, չէր վարանում ճշմարտությունը երեսին ասե-լուց: Անչափ շատ էր սիրում մորը, որի միակ որդին էր: Մայր, որ բազում տանջանք-ներ հաղթահարելով մեծաց-րել էր որդուն, ներքին հը-պարտություն էր ապրում տե-նելով իր Վարդանին լավ մարդ

դարձած: Նա սիրում էր ընկերներին, իր աշխատանքը (կարի զը-խամասային ֆաբրիկայում): Ընտանիքին միջոցառում հայր էր, որախաճում էր իր երեք որդիներով, գարմանայի է, որ նախքան երկրաշարժը հա-ճախ էր կրկնում. «Ես շատ եմ վախենում, կարծես կորց-նելու եմ բոլորիդ միանգամից»: Եվ դա էր պատճառը, որ ըս-կընել էր ցուցաբերել մեծ շտա-պողականություն, աշխատե-լով արագ իրականացնել բո-լոր լավ մտահղացումները, չը-թողնելով վաղվա օրվան: Կար




Ճես զգում էր, որ դեռ շատ ու շատ իղձեր էր կիսատ թող-նելու:

ԵՐԱՋԸ ԴԱՐՁԱՎ ԻՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Համլետ Պողոսյանը սովոր-ում էր 9-րդ դպրոցի 9-րդ դասարանում: Նույն դպրոցում էին սովորում նաև Համլետի եղբայրն ու քույրը: Չարա-բաստիկ այդ օրը՝ դեկտեմբե-րի 7-ին, նրանք երեքով էլ դըպ-րոցում էին: Երկուսը փրկվե-ցին, իսկ Համլետին, երբ հա-նցեցին փրատակներից, արդեն մահացել էր: Եվ... կատարվեց մոր այդ օրվա երազը: — Երազ տեսա, ամծայրա-ծիր ծով էր, որի մեջ թափվում էին անմկարագրելի տղամոտ գետեր, իսկ ծովի վրա լողում

էին երեք տաշեղներ, որոնք ծովի սպիքներից մերթ ընդ մերթ կորչում և կրկին ջրի ե-րես էին ելնում: Հանկարծ ա-լիքների միջից հայտնվեցին ոչ թե երեք՝ տաշեղները, այլ երկու սպիտակ գառներ: Զար-մացա, ո՞վ է տեսել, որ գառ-ները կարողանան ջրի վրա մտնել: Եվ մեկ էլ տեսնեմ հը-րուշակեղենի ֆաբրիկայի 9 հարկանի շենքը փլվեց: Ես վազեցի, ու հենց այդ պահին շենքից երեք շիֆր ընկան ոտ-քերիս տակ՝ մեկը փշովեց, եր-կուսը՝ մնացին:



Եվ նրազս ինչպես տեսել էի, այդպես էլ իրականություն դարձավ...

ԴԱՐԵՋԱՆ ԱՏԵՓԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ծնվել էր 1956 թ., Դիլի-ջանում: Ամուսնանում և տե-ղափոխվում է Լեւոնական: Տնային տնտեսուհի էր Դարե-ջանը, խոհանոցի գիտակ ու հարևանսեր: Նա կյանքը նը-վիրում էր ընտանիքին, երե-խաների դաստիարակությա-նը: 32 գարուն ապրեց նա, ա-

մուսնում, երեք երեխաների՝ թողնելով մորմոքում վիշտ, անբուժելի վերք: Ծառ անգամներ են սկեսու-րը, որին մոր տեղ ընդունեց ու սիրեց Դարեջանը, հարա-գատները երկար - երկար կանգնում նրա շիրիմի մոտ, ծաղկեփնջեր դնում ու մղկը-տալով հատաչում...



ՍՈՆԱ ԻՇԽԱՆԻ ՄԵԴՈՅԱՆ

Ծնվել է 1972 թ. մայիսի 15-ին, սովորել №10 դպրո-ցում: 10-րդ դասարանի սան էր և ուսման գերազանցիկ: Մայրը՝ Երջանիկը, միշտ դժ-գոհում էր աղջկա ծննդյան ան-տրվա համար, ամեն անգամ ա-սելով, որ մայիկը արցունքոտ ամիս է, և աղջիկը կարող է դժբախտ լինել: Իրոք, 8-րդ դասարանում էր սովորում Սո-նան, երբ մորից որբացավ ու արցունքները չէին հեռանում

նրա աչքերից: Զգտում էր ի-րագործել մոր երազանքները, դառնալ բանիմաց ու խելացի, հասարակությամբ պիտանի մարդ: Ինքնամիտ էր Սո-նան, չէր սիրում որևէ մեկին անհանգստացնել: Հատուկ ճա-շակ ուներ ու կարելու հիա-նալի շնորհ, լավ ընկիր էր, ջերմ ու հյուրասեր: Հիվանդու-թյան պատճառով երեք օր չէր հաճախում դպրոց, դեկ-տեմբերի 7-ին որոշեց անպա-յան գնալ, քանի որ ստուգու-



դական աշխատանք էին գրե-լու: Գնաց ու...



Ռուբեն ԱՅԵՓԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ

1987-ին ավարտեց № 23 դպրոցը և ընդունվեց ԵրԳՄ-ի Լեհիմականի մասնաճյուղը: Սիրում էր սպորտը՝ ձեռքի գնդակը, հրաշալի մարզիկ էր: Օտոտով ինքն էլ սկսեց մարզել փոքրիկներին, սիրում էր սաներին, նրանց փոխանցում սիրամ մարզաձևի գաղտնիքները: Թվում էր, թե սկսվել է մի հրաշալի կենսագրություն, որ վերական չի ունենալու: Սակայն...

Պետք է դառնար ինձեներ-մեխանիկ ու իր հարազատ հայրենիքի հոգսերը հոգար: Չհասցրեց...

Հարում էր մեր ժողովրդական ազնիվ շարժմանը: Չհասցրեց...

Բարի, ազնիվ, տան պուրը հանդիսացող հոր մահից հետո վշտաբեկ մոր միակ հե-

նարանն ու միտքարությունը պիտի դառնար: Պիտի կանգնել, արմատներ արձակել, նյութատարած ծառ դառնար, մորը սիրելի, բայց չարեց: Չհասցրեց...

Երազում էր ամուսնացնել կազմել ու անպայման չորս զավակ ունենալ: Նույնիսկ ընտրել էր անունները (գեղեցիկ, հայկական անուններ): Չուներցավ:

Չհասցրեց:

Սիրահարվեց այն երեքային աղջկան, բայց սիրել չհասցրեց...

Եվ ահա մարտը, բայց կարճ կենսագրության վերջակետը. իրականում ու կատարելից դեկտեմբերյան աղետալի օրը եղավ:




ՍԻՎԼԱ ԿԱՐԼԵՆԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Ծնվել էր 1962 թ. Լեհիմականում: Սիվլան սովորեց № 19 միջնակարգ դպրոցում, 7-րդ դասարանից տեղափոխվեց № 36 դպրոց: Ավարտե-

լով դպրոցը, նա ընդունվեց Լեհիմականի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Ավարտելուց հետո, ամուսնու հետ աշխատեց Կարճապետ գյուղում (Կալինինյանի շրջան): Երեք տարի աշխատելուց հետո եկավ հայրենի քաղաք: Ուներ երկու երեխա՝ աղջիկ և տղա: Չուներցե տղայի հետ, իր քնակարանում:

Ամուսինը՝ Գուրգեն Տարախչյանը, երկրաչարժի ծամանակ քնած էր: Սիվլան բըղավել էր՝ Սիմախյան գրկիր և փախիր, Գուրգեն: Ապա ինքը հասել էր սկեսրոջը փրկելու, բայց այդպես էլ չէր կարողացել:



ՔՆ ԳԵՂԵՑԻԿ ԿՅԱՆԻ ՓՈՒԽԱՐԵՆ

Մի փունջ վարդեր են բուրում, սիրելիս... Երեկոյան մենք հրաժեշտ տվեցինք իրար, բայց այն ժամանակ ես դա չհասկացա: Առավոտյան աշխատանքի էիր, չէիր շտա-

ԱՇՈՏ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

պում, քաղկաթոռին նստած լուռ ինձ էիր նայում: Իսկ գիշերվա ժամը մեկին տորճ խնդրեցիր, որ երբեք չէիր խըմում: Սրճի՝ քաժակը շրջեցիր և խնդրեցիր, որ գոնե մեկ անգամ էլ քո քախտը բացես: Ես ասացի ընդամենը մեկ նախադասություն. «Օ՛հ, Աստված իմ, կարծես ողջ աշխարհը քարոքանդ է եղել»: Օրջանակի մեջ մի մեծ լուր թվանշան էր գրված: Բաժակը հրեցի մի կողմ և շատ տխրեցի: Դու մտեցար դաշնամուրին և նվագեցիր իմ սիրած երգը՝ «Առանց քեզ»...

Երկրաչարժից հետո, երբ տուն վերադարձա, հիշե-

ցի սրճի քաժակը, քո վերջին հայացքը և պատկերացրի, թե ինչպես փլվեց գուլպա-նասկեղենի ա/մ կոտտոն արտադրամասը, ուր նաև դու էիր...

Ես չեմ կարող մերել այն մարդկանց, ովքեր կատուցեցին աղ շինությունը, որ իվեց կյանքը: Իսկ դու ընդամենը քառասուն տարեկան էիր:

Ներքի ինձ սիրելիս, որ քեզանից հետո երկար տարիներ պիտի ապրես: Պիտի ապրեմ՝ քո երեք հրաշալի բախիկների համար, որ նրանց թախտոտ աչքերը մի օր պայծառաման...

(կնոջ հրաժեշտի խոսքից)



ՆԱՐԻՆԵ ՌԱՃԻՎԻ ՄԵԼԻՔՈՆՅԱՆ

Ծնվել էր 1966 թվականի փետրվարի 24-ին, Լեհիմականում: № 28 միջնակարգ դպրոց-

րոցն ավարտելուց հետո, 1983 թ. Նարինեն ընդունվեց Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտ: Միևնույն ժամանակ աշխատում էր Լեհիմականի գույպեղենի արտադրական միավորումում:

1988 թվականի դեկտեմբերի 7-ին Նարինեն աշխատանքի մեջ էր...

Նարինեն ընդամենը մի շաբաթվա հարսնացու էր: Կյանքի նոր ուղի էր մտել Նարինեն՝ ընտանիք կազմելու, երջանակահարու և մեկ ուրիշին երջանակացնելու մտքումներով:

Դաժան աղետն իր անեղ վերջակետը դրեց նրա բարի ցանկություններին...




ԱՆԱՆՆԵՐԵՔ ԵՐ ԼՐԱՆՆԿԱՐԻՑ ԺԵՂՆԱՅԻՆ

Նրանք չկան, սակայն հավերժ անմեռ է նրա անունը, բարի հիշատակը: Այսօր էլ, մեծ ողբերգությունից հինգ շուրջ երեք տարի անց, նրա հարազատները, բարեկամները, հարեաններն ու ծանոթները հիշում են նրան: Հիշում են՝ խոնավ աչքերով, փստոսանքով: Հիշում են նաև փոքրիկ Մարինենին, որ այնքան կապված էր հոր հետ, հիշում են այդ ծաղիկ բախիկին:

ԳԱՅԱՆԵ ԱՍՏՊՅԱՆ

Գայանեն 23 տարեկան էր, հույսերով ու երազներով լեցուն մի աղջիկ, որ կյանքից հեռացավ այնքան անըստապահի: Սովորել է Բ. Դարիքյանի անվան № 9 միջնակարգ դպրոցում, որն ավարտելուց հետո ընդունվել ու ավարտել է երկաթգծի № 14 (36) ուսումնարանը, որպես հեռախոսավարուհի: Չհասցրեց իր մասնագիտությամբ



ԿՐԻՃԱ ՎԱԶԳԵՆԻ ՄՈՒՍԻՎՅԱՆ

Ծնվել էր 1954 թվականին: Ավարտել էր № 9 միջնակարգ դպրոցը: Դրանից հետո ընդունվել և ավարտել էր ռադիոտեխնիկական ուսումնարանը: Օտոս ընկերատեր ու բարի անձնավորություն էր: Աշխատում էր կարի գործարանում որպես ավագ խոհարար: Ամուսնացած էր, դեռ երեխա չուներ: Գրիշան 34 տարեկան հասակում գոհվեց դեկտեմբերի 7-ի անավոր երկրաչարժի ժամանակ:

ՎԱԶԳԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



ԼԻԶԱ ԳԵՎՈՐԳԻ ԹՈՍՈՒՆՅԱՆ

Ծնվել էր 1941 թ., երբ եկել է հոր «սև թուղթը»: Մոր միակ

զավակն է եղել: Սովորել էր № 4 դպրոցում, բարձր գնահատականներով: Դպրոցն ավարտելուց հետո Լիզան սովորեց երաժշտական ուսումնարանի քանոնի բաժնում, որից հետո ավարտեց Երևանի կոնսերվատորիայի խմբավարական բաժինը: Ավարտելուց հետո որպես դաշնակահարուհի աշխատում էր մանկապարտեզում, երկ/գծի երաժշտական դպրոցում քանոնի դասնա տու էր: Ամուսնացած էր, ուներ 3 երեխա: Չտեսավ աղջկա ամուսնությունն ու որդու վերադարձը բանակից: Չուներցե «Մանկական աշխարհում»:



ՄԻՍԿՆԻ ԿՐԻՍՏԻՆԱ

Միսկնի Կրիստինան 23 տարեկան էր, հույսերով ու երազներով լեցուն մի աղջիկ, որ կյանքից հեռացավ այնքան անըստապահի: Սովորել է Բ. Դարիքյանի անվան № 9 միջնակարգ դպրոցում, որն ավարտելուց հետո ընդունվել ու ավարտել է երկաթգծի № 14 (36) ուսումնարանը, որպես հեռախոսավարուհի: Չհասցրեց իր մասնագիտությամբ

աշխատել, որոշեց հոր և բրոջ հետ աշխատել կոշիկի ֆաբրիկայում: Բարեխիղճ աշխատող էր, սիրով կատարում էր նաև հասարակական աշխատանք, սիրված ու հարգված էր կոլեկտիվի կողմից: Արհա վիրքի օրը ընկերուհիների հետ գնում է հաշվապահություն՝ աշխատավարձ ստանալու ու այնտեղ էլ կնքում իր մահկանացուն:

ՕՏԵԼՅԱ ԱՍՏՊՅԱՆ

աշխատել, որոշեց հոր և բրոջ հետ աշխատել կոշիկի ֆաբրիկայում: Բարեխիղճ աշխատող էր, սիրով կատարում էր նաև հասարակական աշխատանք, սիրված ու հարգված էր կոլեկտիվի կողմից: Արհա վիրքի օրը ընկերուհիների հետ գնում է հաշվապահություն՝ աշխատավարձ ստանալու ու այնտեղ էլ կնքում իր մահկանացուն:

ՕՏԵԼՅԱ ԱՍՏՊՅԱՆ



ՏԻՐԱՆ ՏՈՒՆՅԱՆ

Ծնվել էր 1979 թ. հոկտեմբերի 30-ին, Լեհիմականում: Սովորել է Ավ. Իսահակյանի անվան № 26 դպրոցի 2-րդ «Ա» դասարանում: Սովորում էր գեղագրաց: Այս նկարը փակցված էր դպրոցի առաջադիմության վաճառակին: Սիրում էր ջութակ նվագել, հետաքրքիր պատմություններ լսել և նոր պատմություններ հորինել: Ամեն անգամ ստիպում էր կրկնել հայոց Տիրան թագավորի ողբերգական պատ

մությունը և ասում. «Գուցե բոլոր Տիրան անուն կրողներին հետ ինչ-որ բան պետք է կատարվի...»:

Այդ շաբաթափոխ օրն արթնացավ անորմառիտի, հիվանդ էր: Պատմեց երազը. շենքը փլվել էր: Հարազատները ծիծաղեցին, հանգստացրին ու Տիրանը այդպես էլ պատկած մնաց անկողնում... Իսկ նա այնպես էր ապաստում նոր տարվան: Դեկտեմբերի 6-ին բացեց տոնածառի խաղալիքների արկղը, մեկ-մեկ նայեց ու նորից խնամքով դասավորեց, հետո մտեցավ դեղձանիկի վանդակին, երկար սիրեց թռչնակին (այն ժամանակ դեռ իրանց սովորական թվացող արարքներ էին. ի՞նչ գիտեցանք մոռցրեց, որ...): Թռչնակը հավատարիմ մնաց նրան, թեև փրկվել էր, սակայն չէր հեռանում, պատվում էր ավերակների վրա: Ու երբ գրտան Տիրանին, թռչնակն այլևս չեբևաց...

ԳԵՎՈՐԳ ՏՈՒՆՅԱՆ

ԵՐԿՐԱՇԱՐԺ, ԲԱՐԵԿԱՄՈՒ- ԹՅԱՆ ԿԱՄՈՒՐՋՆԵՐ, ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

ջին գիշերը նրանց ավերակոյտերից հանեցին 191 հոգու: Մեկնելով աղետի վայրեր, Երևանից, Երբիճից, Հայաստանի մոտակայքից, «Հայ-էլեկտրամեքենա», «Արևաստ» արտադրական միավորումների, մյուս ձեռնարկությունների համերգը իրենց հետ զգալի քանակությամբ տեխնիկա տարան և աշխատում էին գիշեր ու գոր:

Դեկտեմբերի 8-ի առավոտյան աղետի վայրեր հասան փրկարարների ճոր խմբեր: Հարյուրավոր մարդիկ էին եկել Երևանի համալսարանից, պոլիտեխնիկական ինստիտուտից, «Մասիս» ֆիրմայից, ոսկերչական, այլուրից: ավտոդղերի գործարաններից, կոնսերվատորիայից: Մինչև երեկո աղետի վայրերում արդեն աշխատում էր 181 ջուկատ: Հաջորդ օրն այդ թիվը կրկնապատկեց: Լեհիմա-կանում, Ստեփանավանում, Սպիտակում, Կիրովականում, ավերված շրջակայքում երկու ու գյուղերում աշխատում էին հանրապետության համարյա բոլոր շրջանների փրկարարները: Դափանից, օրինակ, մասնակցում էին 800, Կամոյից՝ 1400, Մարտունոց՝ 1600, Արարատից՝ 3000, Արտվաշից՝ 5000, Արթիկից՝ 20000 աշխատավորներ: Միայն Երևանի ջոկատներում ընդգրկված էր 70 հազար մարդ: Հանրապետության բուններից գործում էին 84 ջոկատներ: Նման խմբեր էին ուղարկել Արտաշատն ու Հրազդանը, Սևանն ու Հոկտեմբերյանը, Էջմիածինն ու Բաղրամյանը, մյուս շրջանները:

Հայր համազգային ողբի խոր վշտով էր լցրել միլիոնավոր մարդկանց սրտերը: Բայց զարմանալի է մարդ արարածը: Նույնիսկ ողբերգության պահին, երբ հույսի նշույլ անգամ չի լինում, նա սկսում էր փրկել և գործում, հետևանքում է: Քանի երեխա կգտնվեր, եթե Ախուրյանի շրջանի Մուսայելյանի միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ Ռ. Առաքելյանը մի քանի անգամ չվազեր Երեբոնի դպրոցը ու դուրս չե-հաներ սովորողներին: Երբ Կիրովականը ցնցվեց, Սաշիկ Գարոյանը փորձեց փրկել որդուն: Սակայն վիթխարի ծածկասպանը փակեցին նրանց ճանապարհը: Համկարծ հատակը ցած ահեց, և Սաշիկը կախվեց գլուխն ի վրա: Կախվեց, բայց ամոր թունց որդուն ու վեց ժամ սղոյվես մրանց, մինչև մարդիկ օգնության հասան: Իր մեկուկես տարեկան դստերը հրաշքով փրկեց հետ լեհականացի, քանոթապահ Սուսաննա Ավասյանը: Մի ձեռքով նրան գրկած, մյուսով պանելի ձողից բռնած, նա պահեց մնաց, մինչև զինուորական օգնության հասան և երկուսին էլ փրկեցին: Ինչ ջանքեր ասես, որ չթափեց Լեհիմականի № 2

դպրոցի ուսուցչուհի Էմմա Հակոբյանը՝ փրկույալների տակ չորս ամսական դստերը կենդանի պահելու համար: Վիթխարի ծածկասպանի հարվածից նա ուշաթափվել էր, սթափվեց աղջկա լացից, դստեր ծարավը հագեցրեց իր մատի աղյուղով և 5 օր 6 ժամ 40 րոպե քարե զննչանում պահեց նրան, մինչև մարդիկ օգնության հասան և երկուսին էլ փրկեցին:

Հազարավոր մարդիկ էին օգնության հասել, բայց ողբան ծանր էր նրանց աշխատանքը: Երկրակեղևի ճորանոթը ցնցումներն աստիճանաբար նստեցնում էին փուլ եկած վիթխարի ավերակոյտերը, որոնց տակից լավում էին փրկության աղերսաբերները, իսկ փշրված ու կիսաջարդ սակավույտերը, հարյուրավոր ստնակներով քարերը, անգամ փռչին հնարավոր չէր արագորեն մարդել: Մարդիկ ստիպված էին առանց սարսրելու սողակել երեքսող ավերակոյտերի խորշերը, փրկել կանանց, երեխաներին ու տղամարդկանց: Հոկտեմբերյանի շրջանից եկած հայ ու եզրի երիտասարդներ Գուպար Հակոբյանը, Լևոն և Դառիր Բուդաղյանները, Ալիխան Աբգվեյանը, Քյալաչ Արտյանը, մյուսները երեք օր քարակոյտերի դեմ կռիվ տղվեցին և, ահագուրու ծածկասպանի տակ մտնելով, փրկեցին Մարինե անունով մի կնոջ և նրա դստերն ու մանչուկին: Սևանից տրեստի փրկարարական ջոկատը 48 ժամ անընդհատ մաքրում էր հինգ հարկանի շենքի դեռ ժողովրդավարական Անահիտ Էլչաշյանին փրկելու համար: Երբիճից տրեստի բեռնակարծ Հենրիկ Պողոսյանը, հաղթահարելով ահաբեկող դժվարությունը, 47 անգամ քափանցեց փրկածների տակ: Ամեն անգամ, երբ նա ճոր մարդու էր հանում, թվում էր, թե հարազատի կյանքն է փրկում ու ճոր ոգևորությամբ կրկին սողակում էր ցած և, մարված աչքերին հայելով, մահվան գիրաններից նորանոր աղետյալների խումբ: Ինչպիսի երջանկություն էին ապրում Երևանից շինմանու-ծային արտադրական միավորումը՝ Հովիկ Արքայանյանի ղեկավարած բրիգադի անդամներն իրենց հանած տար մարդուց շուրաքանչուրի կյանքի փրկության համար: Լեհական դժվարություններ հաղթահարելով, Մեծ Պարգևում տասնյակ երեխաների փրկեցին նաև Աշտարակի, Կրույկի, Հլազդանի ջուկարների անդամները: Երկրաբանի առաջին հարվածն էր բավական էր, որ աշխարհի և Եվրոպայի եակնին չեմպիոն Բենուր Փաշայանը շենքից անմիջապես հանի իր սաներին, իսկ ինքը, նկատելով պատերի երկրորդ, դուռն օտարի պատմանից, վճարովուրդը:

(Շարունակվի)



ԿԱՐՈՏՈՎ ԳՆԱՑ

ՊԱՏՈՒՄ Է ՄԱՅՐԸ

ՆԱՌԻՆԵ ԳԱՐՈՅՆԻ մա սին ատմ էին՝ «Աչքերից լույս է կարծես»: Իրոք որ, լույս էր, կարոտ ու հույս էր իմ լուսավորող Նարինե: Նարինեն իմ հարսիկն էր՝ մի ոսկեղեն երագ, որ այդպես էլ երագ դարձավ: Իմ որդին՝ Ռազմիկ Գարոյանը և Նարինեն համա դասարանցիներ էին: Սովորում էին № 28 դպրոցի 10-րդ դասարանում: Սիրում էին միմյանց: 10-րդ դասարանը ավարտեցին, ամուսնացան, ունեցան լուսամուկի գավակ: Փոքրիկը 9 ամսական էր, որ

հորը բանակ տարան: 1988-ի օգոստոսին տոնեցինք մեր փոքրիկ Լևոնիկի 1 տարին:

Կործանարար երկրաշարժը հիմքից ցնցեց դարավոր Գյում թին, դարձրեց ավերակ, տարավ հազարավոր զոհեր, որոնց թվում և իմ կիսամորթաց հարսիկն ու անուշիկ թոռնիկին: Նարինե ընդամենը 19 տարեկան էր, իսկ փոքրիկ Լեվոնիկը՝ 1 տարեկան 4 ամսական:

Քանի որ որդիս ծառայության մեջ էր, Նարինե հաճախ կարոտից, թե կանխագագուցից կրկնում էր. «Ես երեխաներն ու Ռազմիկին չտեսնեմ»: Մեծը ծիծաղում

էին:

Այդպես էլ չտեսավ իր սիրած ամուսնուն, իր սուսքին սիրուն, որի պողի հետ էլ գեղեցիկ իջավ «Ճառանկունի» թողամասում: Մեր բնակարանում մնաց նաև իմ դուստրը՝ 15-ամյա ՄԱՌԻՆԵՆ:

Այսպես... Մի ընտանիքից 3-ը: Իսկ Մարինեն № 37 դպրոցի 8-րդ դասարանի աշակերտուհի էր, համեստ ու խելացի: Նրա հայացքը միշտ տխրություն էր արտահայտում:

Ինչքան երազանքներ ուներ իմ անմեղ դստրիկը, սակայն երկրաշարժը անժամանակ ընդհատեց նրա կյանքը և ծաղիկ հասակում ծաղիկ դարձավ:



ՋՈՒԼԵՏԱ ՍԻՄՎՈՆԻ

ԲԱՂՎԱՍԱՐՅԱՆԸ (ծնված 1951 թվականին) մեր բարի խորհրդատուն էր և նրա պա կան այնպես զգում ենք: Այլևս չենք լսում նրա սրա-

խոսությունները, որոնցով այն պես համեմված էր Ջուլետայի խոսքը: Դաժան վայրկյանը հավերժ լուցրեց նրան:

Պարզ ու անպարտկալ կենսագրություն ունի այս գեղեցկուհին: Սովորել է № 11 դպրոցում, բարձր առաջադիմությամբ: Այս կրթությունը շարունակել է մանկավարժական ուսումնարանի նախադպրոցական բաժնում:

Ուսումնարանը ավարտելուց հետո Ջուլետան ամուսնացավ: Ամուսնու հետ ոչինչ չէր խնայում, որ զավակները մեծանան անհոգ ու երջանիկ: Աշխատանքի անցավ Ախուրյանի № 2 մանկապարտեզում որպես դաստիարակչուհի: Գեղեցիկ էր հոգով ու էությունով, իր սաներին դաստիարակում էր իմաստունությամբ: Սիրված մայր էր իր զավակների՝ Հայ

կի և Հակոբիկի համար: Ջերմություն ու բարություն ծնող հույս էր, յուրահատուկ կին:

Ջուլետա, սիրելիս, դու երագ դարձար, իմ թխաշաքուրիկ, մտերիմ իմ մանկություն: Կմտածե՛իր, որ քո սուսքը, Ախուրյանի № 4 շենքը քո գերեզմանն է դառնալու: Իմ մեղով, բարի, բերուշ ու ջերմ թույր: Դու թանկ ու անմեղ զոհ, քեզ հետ տարար քո սիրատուն բալիկների մանկական ժպիտները: Որդուդ և դստերդ աչքերը միշտ արցունքոտ են անգամ այն ժամին, երբ չեն արտասվում: Դու այդպես էլ չիմացար, որ քեզ հետ գոհվեց մեր ՄԱՌԻՆԵՆ, անդամալուծ դարձավ Միլոն մայրիկը: Քույր իմ, սեսիք շատ ունե՛մ, բայց ինչպես ասեմ...



ՋՈՅԱ ՍԱՐԳՍԻ

ՉՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Մեկ է 1951 թ. հունիսի 26-ին, Լենինականում: Բանվորի բնտանիքում, Սովորել է Աղսյանի անվան № 19 միջն. դպրոցում, ավարտելուց հետո՝ 1969 թ., ամուսնացել: Ուրախ ու երջանիկ ապրում էր իր տաք օջախում, 3 երեխաներով: Յուրահատուկ բնավորությամբ էր օժտված Ջոյան, բարեխիղճ ու ազնիվ, նվիրված բոլոր հարազատներին, առանձնապես եղբորը: Այնքան մարդամոտ էր, գրավող, ինչպես ասում են՝ լեզու էր գտնում բոլորի հետ: Ջոյանն ու նուրբ այս կինը մեծ զոհվարությամբ էր համակերպվել ծնողների կորուստին հետ, նրանց մահից հետո բույրերի և եղբոր համար եղել է և հայր, և մայր: Այդ սև օրը «Նուսն-

կյունի» թաղամասի իր բնակարանում հազնվում էր արագ դստեր հետ տանից դուրս գալու համար: Այդ պահին ճնշում է հեռախոսը, և հարևանուհին սուրճ է խնդրում: Ջոյան դստերը ուղարկում է դուրս, իսկ ինքը՝ սուրճը ձեռքին, բարձրանում է վերև ու այդ պահին էլ... Նույն մուտքում ապրում էին երեք հարևանուհիները՝ հարազատ բույրերի նման և միշտ միմյանց հետ զրուցելիս ասում էին, որ իրարից երբեք չեն բաժանվի: Այդպես էլ եղավ՝ մահը երեքի դուրս միանգամից փակեց:

ՄՆԱՅԱԿԱՆ ՉՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Ինչպե՞ս Մեծ Բրիտանիա

Քույր իմ, ի՞նչ դժվարություններ հաղթահարեցիր, որքան տառապեցիր երեխ սիրատուն աղջիկներիդ մեծացնելու համար: Տենցի, շաշարվեցիր մեռակ, որով հետև... Դու ամեն ինչ արեցիր, սակայն, ավաղ, դեկտեմբերյան շաբաթը չըբողեց, որ դու վաղեմի մայրական բերկրանք մինչև վերջ: Ու քանի որ քանի որ մահը դուրսից արգելադրեց մահ վիշտը:

Որքան էիր հպարտանում քո 22-ամյա գեղեցկուհի Սեդիսի, որ կազմել էր մի հիանալի ընտանիք: Դեռ մեկ տարին չլրացած երկվորյակներ Սեդիսի և Սեդիսի և Արմենիսի գրկում քո Սեդիս կույզ գնաց երկաշարով: Նրանց հետ էր ստորի մյուս կեսը՝ 20-ամյա Սեդիս, դուստրդ: Երբ նա ևս երկուսը «հայտնաբերեց», ապա կոկոնաբեր բանակից վերադարձող կյանքի ընկերոջը՝ կյանքի, ու հարսնախոսք երեխաներն առն կմտներ:



Քեզ, Քոնի Իս...

Սեդիսի և Վոֆյայի կորստյան համար այսօր էլ սգում են նեկրապոլի անվան դպրոցի նախկին շրջանավարտ - համադասարանցիները, ուսուցիչները, բարեկամներն ու հարևանները:

Մեծ է քո վիշտը, քույր իմ, սակայն դիմացի՛ր: Դիմացի՛ր, որովհետև համազդային էր աղետը, որ կորուստն անհավանական ծաղիկ կյանքի, շնչեղ բազում սրտերի իղձ-բեղմունքներ:

Չարադեպ այդ օրը, նույն բնակարանի ավերակների տակ գտնվեց նաև Սեդիսի տագր՝ 26-ամյա Սեդիսի Սեդիսի Գրիգորիսի, անտեղյակ, որ հազարավոր անմեղ երեխաներ, նաև ծանր ուսուցիչներ գտնվեցին իր սիրելի № 10 միջնակարգ դպրոցում:

Քույր իմ: Քո Սեդիս դու տեր երբեմնի շենքի տեղում այսօր կանգնեցվել է հուշարձան-խաչքար, որի վրա պատկերված է երեխան գրկած մայրը: Ինձ թվում է,



Ինչ է քո Սեդիսը, որ չի հասցրել գրկելու իր մյուս ձագուկին...

Կ. ՀԱԿՈՐՅԱՆ

ԺՊԻՏ ԷԻՐ ՊԱՐԳԵՎՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ

ՎԱՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Իմ սիրելի Վանիկ, ձեռքիս տակ է քո 1980 թվականի Մոսկվայի հիվանդանոցաձից օրագիրը, ուր ամենօրյա սպորտներից գրառումներն են: Այդ ինչպես ես կարողացել տառապանքների թաքցնել քո հարազատներից ու բարեկամներից, ընկերներից: Ընթերցելով օրագիրը, զարմացա քո ինքնատիրապետման արվեստի համար: Դու ցավիլի ճիշտ սեղմել ես առամներից տակ և քո ժպիտով ժպիտ պարզել դիմացիներին:

Հորդատու անձրևի նման թափվում են արցունքներս, յոթվարանում եմ բառեր գրումն քո մարդկային, մարդասիրական վերաբերմունքի, ընկերներից նկատմամբ նվիրվածությունը, հայրական շեղությունը բնութագրելու համար: Որտեղ էլ աշխատեցիր, իսկ վերջին 8 տարիներին № 93 պրոֆտեխնուստմարմանի տնօրեն էիր, մնացիլ քոլորի համար «Մեր Վանիկ»: Նույնիսկ գոհ վաճառելի հիշատակին նվիրված ցուցահանդեսը դիտելիս, քեզ ճանաչողներն ասում էին՝ «Մեր Վանիկն է»: Այսօր կատարում եմ տղա



յիդ՝ Արայի և կնոջդ՝ Էմմայի ցանկությունը և ներկայացնում 1988 թ. նոյեմբերի 30-ի տղայից շարադրանքից երկու տող՝ այդ տարվա աշնանային զգացումների մասին:
— Իմ այս աղբյուրի կենսագրությունը բազմաթիվ աշուններ է տեսել: Մեկը մյուսից ուղեգրում, մեկը մյուսից հմայիչ ու ինչ որ տեղ անկրկնելի ու տպավորիչ...
Սակայն, սակայն այս տարի ինչո՞ւ չընկալեցի բնությունը վերափոխության պահերը, ինչո՞ւ չընկալեցի բազմազան զգեստափոխությունները, աշնանային գունախաղը: Հայր իմ, ես փրկվեցի փյուս տակներից և երկարատև բուժումներից հետո օտարերկրյա և տեղի բժիշկները ինձ կյանք պարզեցին:

ՎԵՐՋԻՆ ԾՆՈՒՆԴԻԿ

ՀԱՍՄԻԿ ՎԻՍՈՒՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ (ծնված 1978 թ.), սովորում էիր № 10 դպրոցի 4-րդ դասարանում, գերազանց առաջադիմությամբ:

Լիդա, քույրիկս, գիտեմ, որ ժամանակն է բուժելու քո և քեզ մեզ հազարավորների հոգիների վերքերը: Գիտես, շատ-շատերի մասին եմ գրել, սակայն Հասմիկի համար գրիչս երկար, շատ երկար Լեռն:

...Երկրաշարժից մեկ շաբաթ առաջ Հասմիկը խնդրեց քրոջս՝ 10-ամյակը նշելու, որ կրանում էր երկտեղերի 6-ին: Բույրս համառեց. «Ամոթ է, լսողները ինչ կասեն, տատիկը 6 ամիս է, ինչ մահացել է: Երկու օր անց Հասմիկը նորից ակնարկեց և երբ մեծ վեց, միանգամից պտույթաց. «Ե՛հ է, ամեն տարի կարող է մեկը մեռնի, ուրեմն ծնունդ չպիտի՛՞նք Գ՞լի»:
Նրանց տանը «երկրաշարժ» երկու տարի առաջ էր ըսվել: 1986 թվականին 37 տարեկան հասակում մահացավ հայրը: Մոր խնամքին թողնելով 3 անչափահաս ե-



րեխաներին, 8 ամիս անց կաթ վաճառարվեց պատիկը, մի քանի ամիս հետո՝ տատիկը: Հորեղբայր Վրդայան տեղի տվեց. «Թող ապի, Հասմիկ, ես կանեմ, դու ինձ հետ գործ բռնի»: Ծառ ուրախացավ Հասմիկը հորեղբոր խոսքերը Լեռն: Երեք օր անընդհատ պատրաստվում էր: Միջոցառման ավարտից հետո մեկ անգամ էլ նայեց ստացած պարգևները, «ոտարախեց» ու պատկեց քննելու:
Դեկտեմբերի 7. մահաբեր երկրաշարժը գերեզմանից վերածեց № 10 դպրոցը: Հասմիկը փակեց աչքերը և քնեց հավիտենական քնով:

ԼՈՒԻՋԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ



ԵՓՐԵՄԻԿ ՍԵՐԳԵՅԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ ծնվել է 1980 թ. նոյեմբերի 16-ին: Սովորում էր Մկրտիչ Արմենի անվան դըպ

ՄԻԱԿ ԵՐԱՋԱՆԿՆ ԱՆՎԱՏԱՐ ՄՐԱՑ

րոցում, միաժամանակ հաճախում սպորտդպրոց. պարսպում թեթև ատլետիկայով: Ուզում էր նմանվել Բրուս Լիին: Միակ երազանքն էր դառնալ աշխարհի չեմպիոն: «Երբ մեծանամ և հաջողվի ինձ գնալ Ծապոնիս, 60 ծաղիկ կդնեմ նրա շիրիմին, որպեսզի Բրուս Լիի հոգին ինձ կարատե տվո՞րեցնի»:

Եփրեմիկը չգիտեր, որ 60 ծաղիկ իր շիրիմն է դրվելու: Չափից դուրս ճարպիկ էր, խելամիտ և բարեհոգի, արտաքինով այնքան նման իր երազած կարատեդոյի աստ-

ղին: Առաջին իսկ մրցումներից հետո շահեց պատվոգիր, որի համար շատ էր ուրախանում: Ասում էր, որ տանելու են Երևան մրցումների: Բայց այդ օրվան չհասավ, բոլոր երազանքները մնացին անավարտ:

Ծախատագիրը կգրեիր, իմ անուշ բալս, Ինչո՞ւ կանգ առար հենց այս տարվա մեջ, Ինչ իմանայի, որ այդ անկարող Բեզ պիտի հիշեմ մինչև կրանքիս վերջ...

ԳԱՌԸ ԶԱԿԱՏԱԳԻՐ

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈՐՅԱՆ (ՄԵԼՔՈՆՅԱՆ), Աճավոր երկրաշարժը խլեց նրան մեզանից, զրկելով հարազատներին Հասմիկի շիրմաքարն ունենալու իրավունքից: Այս օր էլ, երբ արդեն անցել են սպասման երկար ու ձիգ տարիներ, ապրողներս հույսով ու մեծ հավատով ենք սպասում նրան:

Դեկտեմբերի 7... Սովորական աշխատանքային ռոբերտաբլի, որ այդպես էլ մնաց ու մանց կենսագրության երկրաշարժի շարձն

քով գրված էջերում: Հասմիկը սովորականի պես գրեց աշխատանքի հանրախանութ և այլևս չվերադարձավ...

Հանրախանութի փլատակներում չգտնվեց Հասմիկի գրակը: Պատմում են, որ Հասմիկին վիրավոր հանել են և տեղափոխել... Բայց ո՞ր և ինչպիսի՞ ուղղութիւնով: Այդպես էլ առեղծված մնաց:

Ընդամենը 38 տարեկան: Ինչքան իղձեր, ցանկություններ, երազանքներ ուներ իր սգավոր հոգում: 1982 թվա

կանին, երբ մահացավ ամուսինը, Հասմիկը հոգու խորքում անթեղելով անբուժելի վերքը, ամբողջ ուժն ու եռանդը նվիրեց 9 տարեկան Արկադիի և դեռևս մեկ տարին չբուժված Աշոտի դաստիարակությանը: Ինչպիսի հույսով էր սպասում մեծ որդու դպրոցն ավարտելուն, երազում էր փոքր որդուն ուղեկցել առաջին դասարան... Սակայն, ավաղ... Հույսեր, իղձեր, ցանկություններ խորտակվեցին բնական աղետի շարժումներում:

Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ



